

1764

9 (47.925)
U-28

Г. Тнфа
1909

2004

ԱՆՁՆԱՍՊԱՆԻ ՄԸ

ԲՈՂՈՔԸ

ԳՐԵՑ ԻՆՔՆ ՄԻԱԹԵԻ

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԼԱԶԿԵՐՏԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

1909

179

Ա-33

12012

9(47-925)

Ա-28

ար

ԱՆՁՆԱՍՊԱՆԻ ՄԸ ԲՈՂՈՒՔԸ

ԳՐԵՑ ԻՆՔՆ ՄԻԱՔԵԻ

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԼԱԶԿԵՐՏԵԱՆ




1909

ԱՆՁՆԱՍՊԱՆԻ ՍԸ ՉՈՐՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵՐ
ԴԻՄԵԼԷ ՅԵՏՈՅ ԱՌ ՀԱՆՈՒՐ ՀԱՅՍ ՈՒՂՂԵԱԼ ԲՈՂՈՔԸ

Ա. Ն. Հայ ազգային,

ի մօտուս և առաւելապէս ի սկզբանէ անտի իմ տա-
նութիրաբար բնակեալ Կ. Պոլսոյ Եէնի-գաբու թաղէն
սկսեալ՝ չրջակայ Գում-գաբու և Կէտիկ-փաշա թաղերու
և Մեծ շուկայի մէջ գտնուող համայն համադգի՝ ք, խա-
նութգա՛նք, մասնաւորապէս Սեղանաւորք (*) և Ոսկե-
րի՛չք, դո՛ւք՝ որ ամենքդ կը տեսնէիք թէ՛ ես երես-
նամեայ պատուաւոր սեղանաւորութենէս յետոյ, 1898էն
ի վեր մէկ թեւս և բոլոր նիւթական կորուսանելէ զատ,
զանազան հիւանդութեամբ և յամենայնի կորստ յոյժ
թշուառագոյն վրձակիս մէջ, ամառան տապին և ձմրան
ցրտին դէմ ծերացեալ տարիքով՝ սալայատակներու վը-
րայ չարաչար կը տուայտէի, նախկին սեղանաւորական
պատուովս օրակա, հացս ճարելու՝ դո՛ւք և ձեր մէջ
բարեկամ անուամբ գտնուող մարդիկ՝ մասնաւոր՝ որք
անդիմադրելի թշուառութեան ստուերն միայն կը տես-
նէք ցայսօր՝ հաճոյք և ուրախութիւն կ'զգայիք արդա-
րեւ, և վրիժառական գոնունակութիւն մը կը ցոլացնէիք
ձեր դիմաց վրայ, իրրու թէ՛ ես ազգայնս մը, չեմ
գիտեր ինչ մը՝ զոր 1895էն ի վեր և թերեւս անկէ ալ
առաջ մինչև ցայսօր չ'կրցայ հասկնալ՝ արժանի էի այս

(*) Թէպէտ բնկեցեալ՝ այլ սակայն մինչև ցայսօր
Մեծ Ծուկայի մէջ այս երկու արհեստագործ մասնա-
տեղւոյն մէջ աշխատելու վրայ եմ, առանց յատուկ խա-
նութ ունենալու։ Հոս յոյժ հարկաւոր է նաեւ ըսել թէ՛
իմ ազգային գործունէութիւնս 1870 թուականի միջոց-
ներէն սկսած ըլլալով՝ այժմու նոր սեղանաւորք և ու-
կերիչք տեղեկութիւն չունին այդ մասին, մա՛նաւանդ
երիտասարդք և պատանիք, ասոնք՝ ընդհակառակն իմ
մասին ի յոռին չարաչար խաբուելնուն մէջ 14 տարիէ
ի վեր շատ աւելի կ'աւանդուա կը գտնուին, առանց սոյն
թուղթս կարդալէ յետոյ կը յանձնաբարձ մակաւ ինչ
եւս համբերել։



(395)
(39)

13150-58

7

29621-Ա.հ.

Թշուառագոյն վիճակին ենթարկուելու, զոր դժուար փափագեցաք, ըրիք և մղեցիք զիս անձնասպանութեամբ պատիւս փրկելու. նա՛ մանաւանդ 1907ին՝ միաթեւ գոյութեանս մէջ՝ դառնադառն դառնութեամբ դառնացընելով վիճակս՝ յետագայ գրութեանցս մէջ մէկ քանին միայն յիշած և այլ ահարկու գործողութեամբ զիս դարձեալ հալածելէ չ'յադենալով՝ ձեր ազնուագոյն էութեան պայծառ փայլն ի հանդէս բերիք անօրինակաբար, ա՛յն իսկ է, օտարաց հետ համախորհուրդ դաւադրութեամբ... զիս չարաչար սպանելու մէջ ձեր գոհունակութեան լրման հասնելու. որոյ պատմութիւնն եւթ՝ զգայնութեան, պատուոյ և խղճի տէր ճշմարիտ մարդարարածի մը սարսուռ կը պատճառէ և զոր պիտի նշկարագրեմ ապագային մէջ:

Ապաքէն, առանց երկարելու՝ այժմ յիշողութիւննիդ միայն կը զարթոնցանեմ ձեր ամենեցունցդ. ձեր՝ որոց տաանեչօս տարիէ ի վեր շարունակ Հայկական աղատութեան մէջ դատ և դատաստան պահանջելու նպատակաւ բռնուի և տաղնապալի կացով ապրիւս ըսած եմ. ահա ոչ միայն ձեզ՝ այլ ամենեցունցդ մերձաւորաց և հեռաւորաց, ծանօթից և անծանօթից կողմէն այս բողոքագիրս և հրապարակաւ 'ի սփիւռս աշխարհի կը յայտարարեմ թէ՝ Աստուծոյ հզօր և յաղթող կամօքն հասայ գէթ այսօրուան և ըստ թուականական կարգին՝ չորս պաշտօնական տեղեր Ա. հրաժարեալ տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Դուրեան, Բ. Ամենապատիւ Պատրիարք Տ. Մատթէոս Իզմիրեան Ս. Հարց. Գ. Հնչակեան կուսակցութեան Կ. Պօլսոյ Պատ. Մանախմբին և Դ. Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պօլսոյ Պատ. Կոմիտէին ի ստորեւ բառական ընդօրինակութեամբ ուղղած բողոքագրովքս՝ կատարեցի դատախազութիւնս և պահանջուած, որոց ամենուն կողմանէ ստացած պատասխաններս ալ՝ ահա՛ կը հրատարակեմ 'ի լուր աշխարհի:

« Ամենապատիւ Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրեան, Պատրիարք աթոռոյն Կ. Պօլսոյ.

Ամենապատիւ Սրբազան Հայր,

(1) Տասն երեք տարիէն աւելի է՝ որ չեմ գիտեր որո՞ւ կողմանէ գաղտնի հրահանգով, առանց յայտնա-

պէս ուղղակի ինձ ո՛ր եւ է խօսք մ'ուղղուելու՝ յոռի վիճակի մ'ենթարկուած և հսկողութեան տակ առնուած եմ Ազգիս կողմանէ: Այս ընթացքը Սրբազան Հայր, ինձ մեծ զարմանք և ազնութիւն պատճառեց. զի պատուոյս հրապարակային անարգանք մ'էր, մանաւանդ իմ առ Ազգս մատուցած գործնական անձնուիրութիւններս որ եւ է նպատակաւ եղծանելով և անոնց վրայ ստուեր անկողով ոչնչացնելու մասնաւոր նպատակ և դիտում տեսնելով ատոր մէջ՝ չ'հանդուրժեցի. հետեւաբար փոխան անպատիւ կերպով ապրելու՝ նախամեծար համարեցի պատուով մեռանիլ, ուստի 1898ին շոգեկառքի տակ պառկելով ուղեցի կենացս վերջ տալ, սակայն միայն մէկ թեւս խորտակեցաւ, և այդ ժամանակին մէջ բազմաեայ սեղանաւորութեանս արդիւնքներն ալ յափշտակուեցան եւլն. եւլն. եւլն.:

Ի վերայ այս ամենայնի Սրբազան Հայր, ես հաւատք գոյացուցի իս թէ՛ թեւս և բարեկեցիկ վիճակս կորուսանելէ յետոյ, մէկ ձեռքով ցայսօր ենթարկեալ աննկարագրելի տառապանքներու հետեւանօք՝ բազմատեսալ հիւանդութեամբ ապրուստս ճարելու համար անընչապ գործոց մէջ չարաչար տուայտումս՝ ապահովցուցած պէտք էր լինել այն հրահանգիլ մարմինը իմ յոյժ պատուասիրութեանս և առ Ազգս ունեցած մոլեկան սիրոյս ճշմարտիւ գոյութեան մասին, այլ սակայն ընդհակառակն անցեալ 1907 Սեպտեմբերէն սկսեալ՝ յոյժ սաստիկաբար և ահալի կերպով վերակրկնեցաւ հսկողութեամբ՝ ծածկաբար և լսելեայն հալածուած և սպառնալիքը ինձ դէմ:

Սրբազան Հայր, ես ոչ թէ այժմ, այլ իմ այս ցաւալի վիճակին ենթարկեալ օրէն 'ի վեր՝ հանապազօր Աստուած աղաղակած և Ազգիս աղատութեան մէջ՝ հայ ազգային դատարան խնդրած եմ դատուելու համար:

Փառք մեծին Աստուծոյ. նա լսեց իմ զօրն ողջոյն առ ինքն ուղղած աղերսանացս ձայները, և ահա՛ աղատութիւն հռչակուեցաւ. ուստի տարուոյս Յուլիս 11էն ի վեր հիւանդութեանցս պատճառաւ յամեցումէս յետոյ՝ յԱստուած ապաւինեալ՝ խղճի կատարելագոյն հանգրտութեամբ և մաքրութեամբ կը դիմեմ Բարձր Սրբազանութեանդ, և բոլոր գոյութեամբս բողոքելով հանդէպ

ինձ բռնուած այս դարձուրելի անօրինակ ընթացքին դէմ՝ կը խնդրեմ պաղատագին՝ որ ի նկատ առնելով ծեր և ըստ ամենայնի կարօտագին վիճակիս մէջ միաթիւ և զանազան անբուժելի հիւանդութեամբ հոգեվար անհրկարադրելի դառնագոյն կացս՝ չնոր՝ ընէք փութանակի անաչառ և արդարադատ պաշտօնական Ատենի մ'առջեւ ի լոյս և ի յայտ հրաւիրելով այդ հրահանգիլ մարմինը՝ դատել զիս և տաան չորս տարիէ ի վեր այսպիսի անուելի վիճակի մ'ենթարկուելուս ՊԱՏՃԱՌՆ, որուն իսպառ անտեղեակ եմ՝ բացարձակօրէն յայտնէք ինձ զի առանց այդ ՊԱՏՃԱՌՆ գիտակցութեանս՝ նոյն իսկ ազատութեան այս սխրալի օրերուն մէջ անգամ՝ այսպէս անտանելի վիճակի մը տակ ճնշուիմ, ինչպէս կը հաստատէ Ձեր Սրբազնութիւնն նաեւ՝ արդարութեան և հոգակեալ ազատութեան հակառակ ըլլալէ դատ՝ անձնապէս ալ չնչառութենէս սկսեալ ըստ ամենայնի ազատութիւնս կապտած կաշկանդած՝ աշխատութենէ ձեռնութեամբ ըրած և հիւանդութեանցս օր ըստ օրէ ծանրանալուն պատճառ ըլլալէ դատ՝ գոյութիւնս իսկ յարժամ վտանգած ըլլալով՝ վայրկեան առ վայրկեան յուսահատութեան ներքեւ ընկճելու վրայ է զիս:

Վասն որոյ կազաչեմ զՁեզ Սրբազան Հայր, որ այս անստոյգ վիճակէն միանգամ ընդ միշտ փրկուելու համար՝ ըստ խնդրանացս փութապէս դատաստանիդ հրաւիրելու չնորն ընելով ինձ՝ ազգային պատիւս պաշտօնապէս վերահաստատել հաճիք, որպէս զի՝ յետ այնմ ըստ վաղնջական կտտարեալ հաւատոյս՝ Ազգիս փառաւորապէս վերականգման յոյժ մերձակայ երջանկալի օրերն իՐԱՒԱՄԲՍ տեսնելու արժանանալէ զկի՝ խաղաղութեամբ մեռնելու և գերեզմանիս մէջ հանգստօրէն ննջելու ապահովեալ գոնութիւնն ունենամ:

Սրբազան Հայր, ի վերջ խնդրագրոյս հարկ անհրաժեշտ կը համարիմ Ձեր Սրբազնութեան յայտնել թէ՝ Ազգային բուն ՀՈԳԻՈՅՆ պահանջման համաձայն՝ յառաջ քան այժմեան ազգային ներքին կազմակերպութիւններն՝ ազգասիրական հաստատեալ ԱՆՀԱՒԱՍԱՐԵԼԻ գործեր ունիմ կատարած, որոց Ազգային Պատմութեան համար եւս օգտակարութիւնն ակներեւ ըլլալով՝ յառաջ քան մահս յայտնել կաճապարեմ. այլ սակայն ձեռնար-

կած ներկայ դատիս վրայ ո՛ր եւ է ներգործութիւն չ'ազդելու համար՝ նորա վախճանին պիտի կցեմ:

(2) Ամենապատիւ Սրբազան Հայր, ի գիտութիւն Բարձր Սրբազնութեանդ կը յայտնեմ թէ՝ 1908 Սեպտեմբեր 16 թուականաւ վերոգրելոյն նոյնանման խնդրագիր մը տուի Պատր. Տեղապահ Դուրեան Գեր. Տ. Եղիշէ եպիսկոպոսի, որ ի պատասխանի՝ կրկնապէս առաջարկեց ինձ նիւթական օգնութիւն մ'ընել. այլ սակայն ես խոստովանելէ յետոյ ըստ ամենայնի կարօտութիւնս՝ մերժեցի. խնդրելով ցյետին վայրկեան դատաստանիս կատարումն և պատուոյս վերահաստատումը. նոյնն ըրի նաեւ Տեղապահական փոխանորդ Արժ. Ղեւոնդ վարդապետ Դուրեանի, խնդրագրոյս առ Նորին Արժաւապատուութիւն յանձման առթիւ Նորա երիցս ինձ դժբաժան նպաստ և օգնութիւն առաջարկութեանն հանդէպ, և Որ՝ իմ մի եւ նոյն ուղղութեամբ մերժուիմ տեսնելով՝ հուսկ ապա խոստացաւ Պատրիարքարանի պատուոյ Ատենին յանձնել խնդրագիրս, գործոց շատութեան պատճառաւ հնգետասան օր ինձ սպասել յանձնարարելով, յետ լրման ժամանակին՝ Նորին Արժաւապատուութիւնը ուրիշ առարկութեամբ մը 3-4 շաբաթ եւս յետաձգելէ յետոյ՝ այսօր այդու կարի դառնացեալ վիճակէս վերջին ճգամը կը փութամ յայտարարել թէ՝ խնդրոյս կարգադրութիւնը Ձեր Բարձր Սրբազնութեան փառաւորապէս վերստին յաթոռ Պատրիարքութեան բազմելու օրունն մնաց:

Ուստի, Ամենապատիւ Սրբազան Հայր, դատախազութեանս սոյն պարագան եւս յայտնելէ յետոյ՝ ըստ կանխագոյն փափագանացս կը դիմեմ առ Ձեզ և կը խնդրեմ թախանձագին Ձեր Սրբազնութենէն՝ որ իմ անդիմադրելի և յուսահատական վիճակս ի նկատ առնելով՝ Ձեր հոգակեալ օրինասիրութեամբ և արդարասիրութեամբ, խնդրագիրս՝ զոր յամենայնէ զուրկ միաթիւ, հիւանդագին և այլովք թշուառագոյն վիճակիս մէջ տանջանօք վերստին զրել հարկադրեցայ՝ բարեհաճիք ժամ յառաջ ձեռք առնուլ և զարժանն տնօրինել:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ՝ մնամ ըստ ձերունս լոյն ակնդէտ:

Յակոբ Յ. Ալլահվերեան

Կ. Պոլիս, 1908 Նոյ. 5»

« Առ պատուարժան և յարգամեծար Հնչակեան
կուսակցութեան մասնախումբ Կ. Պոլսոյ .

Յարգամեծար Տեարք .

Առանց որոշ և կատարեալ տեղեկութիւն ունենալով՝
դրեթէ տասն և հինգ տարիէ 'ի վեր ԱՆՈՒՂՂԱԿԻ կեր-
պիւ լսած եմ Ազգիս մէջ ազատութեան նպատակին հա-
մար աշխատող Հնչակեան անուամբ գաղտնի մարմնոյ
մը գոյութիւնը . արդարեւ փափազած եմ մասնակցու-
թեամբ աշխատակցիլ իմովսանն , այլ սակայն 'ի սկզբանէ
անտի հանդէպ ինձ բռնուած 'ի ներքոյ բացայայտեալ
յոյժ անպատշաճ ընթացքին պատճառաւ՝ սրտագին բո-
ղոքմամբ մեկուսացեալ մնացած եմ . հոգեով սակայն
զցայց և զցերեկ աղօթելով միայն ազգիս փրկութեան
նպատակաւ ճշմարտութեամբ և ուղղութեամբ աշխա-
տողաց համար , և արդարեւ հայաջինջ բռնակալութեան
չրջանին մէջ այս ընթացքով մնալ հարկադրեցայ սըր-
տատրոփ , ապագայ բարեբաստիկ օրերու մէջ բողոքոյ
ձայնս ուժգնապէս բարձրացնելու առաջադրութեամբ :

Այլ արդ , Յարգամեծար Տեարք , 1908 Յուլիս 11ին
Տաճկաց Սահմանադրութիւն և ազատութիւն հռչա-
կած օրէն 'ի վեր՝ Դուք ծանուցիք հրապարակաւ Ձեր
Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ յատուկ Մասնա-
խմբիդ գոյութիւնն ու կեդրոնը , ուստի՝ նախ Ձեր
բարի նպատակն սիրով ողջունելով՝ Աստուածապարգեւ
մեծ բաղդաւորութեամբ՝ կը դիմեմ առ Ձեզ և անմի-
ջապէս ղետեղելով աստանօր հրաժարեալ Տեղապահ Գեոր.
Դուրեան և ժամանակիս Պատրիարք Իզմիրեան Ամեն .
Տ. Մատթէոս Սրբազան Հարց ուղղեալ բողոքագրոցս
պատճէններն բառ առ բառ՝ որոց 2 թիւ կրող մասը
Սրբ. Պատրիարք Հօր ուղղած գրոյս վրայ յաւելեալ է՝
և փոխարկելով միայն նոցա յատուկ ածականներն յա-
նուն Ձեր յարգամեծարութեան՝ պարունակութիւնքն առ
Ձեզ կուղղեմ : (*)

(*) Հրաժարեալ Պատր. Տեղապահ Գեոր. Տ. Եղիշէ
Դուրեան և այժմեան Պատրիարք Իզմիրեան Ամեն . Տ.
Մատթէոս Ս. Հարց ուղղեալ գրոցս օրինակներն՝ Հըն-
չակեան Կ. Պոլսոյ Մասնախմբին ուղղեալ սոյն գրոյս

Ապաքէն , Տեարք Յարգամեծարք , ինչպէս կը հաս-
տատէք՝ պատուարժանն և քաջն լինի նա անհատ՝ լինի
նա բաղժանդամ մարմին՝ պէտք է լինել ըստ սկզբան
հաւատարիմ իւր խօսքին . արդ՝ Դուք ազատութեան
անձնուէր կը հռչակէք զՁեզ . ապա ուրեմն թոյլտու-
թիւն կը պահանջեմ Ձեր յարգութենէն , առ այժմ խընդ-
րագրոյս մասին աղատ և անկեղծաւորաբար համարձակ
խօսելու յանդիման Ձեր և աշխարհի . եթէ մերժէք՝
յայնժամ առ Ձեզ ուղղած սոյն գիրս ետ կը պահանջեմ .
ուրեմն ըստ սկզբան ազատութեան՝ բացարձակօրէն կը
յայտարարեմ Ձեր յարգութեան թէ՛ :

Ա. — Տասն և չորս տարիէ 'ի վեր ցայսօր և այս
ընթացքով մինչ 'ի գերեզման կրած տառապանքներս ,
գլխաւորաբար այլոց իմ մասիս և դէմ աչքի խփմամբ ,
պիտոյորմամբ , ուղղակի աչքիս մէջ նայելով մաղնիսա-
ցուցմամբ , հետապնդմամբ և այլ անարկու բաղժատեսակ
գործողութեամբ եւլն . պատժուծս , որոց ինձ պէս
պատուասէր և զգայուն ենթակայ մը կամ անձնասպան
կը լինի կամ այլովք կը վտանգի՝ ... ինչպէս որ ես ալ
անձնասպանութեան նպատակաւ թեւս կորուսած եմ և
վաղորդայնս ալ անստոյգ է , ասոնց ամենքն կրսեմ՝
Ձեր իմ մասիս պատժական գաղտնի տնօրինութեամբն
ըլլալուն համոզում գոյացուցած եմ . զոր Ս. Պատրիարքի
տուած բողոքագրոյս մէջ 'յայտնեցի , ուղղակի Ձեզ
յայտնելու նպատակաւ . և Դուք զիս այս զարնուրելի
պատժոյն ենթարկած էք՝ Ձեր վստահութիւնը չարաչար
գործածող փառասիրի մը զրպարտութեան հետեւանօք .
այս առթիւ կը յայտարարեմ նաեւ թէ՛՝ նոյն իսկ ծանր
ժամանակներու մէջ անգամ Ձեզ միջոյնեւր չէին պակսէր
զիս յատենի Ձեր դատելու :

Բ. — Անձնական , ընտանեկան և առեւտրական խըն-
դիրներէ պատրուակ ձեւացուցուած է զրպարտուելուս ,
ինչպէս անցեալ 1907ի վերակրկնեալ սաստկագոյն հա-

այս տեղն դրած էի 'ի տեղեկութիւն . ըստ այսմ իմացիւր
Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կոմիտէին ուղղեալ
յետադայ գրոյս յիշողութեան մասին մէջ ալ սոյն երեք-
եան գրոց ընդօրինակութեանց ղետեղումն :

լածմանն և կրած սպառնալեացս շարժառիթն ալ՝ 'ի զարմանս և յալշուրիւն աշխարհի կը յայտարարեմ թէ՝ « ազգային շահուց պաշտպանութեան նախանձախնդրութիւնս » եղած է. և եթէ ամեն զրպարտութիւն և ամբաստանութիւն անքննարար և անդատաստան ժթոյ մէջ մնայ այսպէս՝ տակաւին շատ ցաւալի սխալումներ և աւաղելի զոհեր պիտի պատահին. այս խօսքերը կրնեմ տասն և չորս տարուան արհաւիրքի վիճակի մը ենթարկմանէս արտադրաբար, իսկ ազգասիրութեան և առ այն անձնութիւնութեան մասին 'ի վերայ տանեաց բարձրաձայն կը յայտարարեմ թէ՝ ուրիշէ հրահանգուելու պէտք չունիմ երբէք և թէ՝ յառաջ քան զՁեզ, Հնչակեան մարմնէդ և ուրիշներէ առաւել՝ ՄԻԱՅՆԱԿ ազգասիրական յոյժ արդիւնաւոր, և զարմանալի է արդարեւ՝ նոյն իսկ Ձեր գոյութեան իբր սերմ ցանուած դործեր կատարած եմ, զորս ընդ հուպ հրատարակեալ հին լրագրերէ եւլն. քաղելով՝ 'ի յայտ պիտի ածեմ:

Գ. — Ձիս հայ ազգութենէս վտարմամբ գաղտնաբար հալածումն եւլն. և օր մ'ալ ծեր, միաթեւ, հիւանդագին և ըստ ամենայնի կարօտադին վիճակիս մէջ առանց ներկայութեանս յայտնի դատաստանի և առանց ըստ արդարութեան դատապարտման՝ Ձեր կողմանէ զիս սպանել տալու հաւանականութիւնն 'ի գլուխ՝ կը յղէ զիս ուղղել առ Ձեզ ներկայ խտաագին բողոքս:

Յարգածեմար Տեարք, այս տեղ անհրաժեշտ հարկ կը համարիմ տեղեկացնել Ձեր յարգութեան թէ՝ Ամեն. Տ. Մատթէոս Իզմիրլեան Ս. Պատրիարք Հայրն վերոգրեալ բողոքագիրս ընթեռնելէ յետոյ՝ « իմ մասին իրեն թէ գրաւորապէս և թէ անգիր տեղեկատու ամբաստանող մը չ'գտնուիլն ինչպէս նաեւ ինքն ալ լրագրաց մէջ ամբաստանական ոեւ է գրութիւն մը կարգացած կամ լսած չ'լլալն » բերան առ բերան ինձ յայնեց. այլ սակայն ըստ որում իմ բողոքս անուանեալ դատախազի դէմ չէ. այլ գաղտնի և ընդհարձակօրէն կաղմակերպեալ մարմնոյ մը ծածկաբար հրահանգաց և գործառնութեանց դէմ՝ ըստ որում ազգային գաղտնի կաղմակերպութիւնս ներքէն գտնուած սահմանիս մէջ իբր պատժող մարմին Դո՛ւք էք առաւել հուշակեալ և ըստ որում ես ալ հա-

մոզում գոյալուցած եմ թէ Հնչակեան մարմինն է զիս պատժողը՝ « պառնակն կը մնայ ինձ փութալ 'ներկայանալ առ Ձեզ, և ահա՝ բուռն բողոքագրովս կը դիմեմ առ յարգամեծար Տեարս Հնչակեան կուսակցութեան մասնախմբին Կ. Պոլսոյ, և յայտնապէս քննութիւն և արդար դատաստան կը պահանջեմ. խնդրելով միանգամայն այս մասին Ձեր տալիք որոշումն և ամենայն պատասխան զրաւոր և պաշտօնապէս ինձ հաղորդել հաճելիդ. որպէս զի տասն և չորս տարիէ 'ի վեր տեւելով՝ այսօրուան յոյժ թշուառագոյն և յուսահատական վիճակիս վախճանին հասնիմ:

Յարգածեմար Տեարք, կը յայտարարեմ նաեւ թէ՝ Ձեր կողմանէ մասնաւոր շնորհ մ'ընդունած պիտի նկատեմ զիս դատաստանիս փութացումը. զի ծանրածանր հիւանդութեամբ յոյժ վտանգաւոր վիճակի մէջ եմ:

Ընդունիլ հաճեցէք յարգամեծար Տեարք խորին յարգանքներս:

Յակոբ Յ. Ալլահիեւեան

Կ. Պոլիս, 1908 Նոյ. 15. »

Ամենապատիւ Տ. Մատթէոս Իզմիրլեան Ս. Պատրիարք Հօր ինձ տուած պատասխանն Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին ուղղած սոյն գրոյս մէջ 'ի վերեւ գրած ըլլալով՝ այժմ կ'անցնիմ հրատարակել Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին հետեւեալ գրաւոր պատասխանն. զոր յանձնեց ինձ ընկեր յարգամեծար Պարոն Արծրունի:

Համար 96. Կ. Պոլիս, 18 Նոյ. 1908.

« ... Տիար Յակոբ Յ. Ալլահիեւեան.

Պարոն.

« Ամսոյս 15 թուակիր Ձեր գրութիւնն ստացած ենք, որով դուք ինքզինքնիդ մեր կողմէ իրեւ թէ ամբաստանուած, վտանգուած և հետապնդման առարկայ դարձած ըլլալ կարծելով՝ « քննութիւն և արդար դատաստան » կը պահանջէք:

Ներկայիւս կուգանք յայտնելու ձեզ, որ, առաջին անգամն է՝ այն ալ ձեր գրութենէն՝ որ կիմանանք ձեր սնունդը և կը լսենք այդ տեսակ խնդրոյ մը գոյութեան մասին, որով՝ իբրեւ մեզ համար անձանթ մը՝ բնական է, որ ձեր մասին ուրիշ որոշում կամ հետապնդումն չէր կարող լինել մեր կողմէն և չկայ:

Ուստի, սոյն գրութեամբ, կարող էք մեր կողմէն ձեզ բողոքովին ապահով և ազատ համարել:

Հնչական կուսակցութեան Կ. Պոլսոյ մասնաճիւղ: ԿԵԻԲ.

«Առ պատուարժան և յարգամեծար Հ. Յ. Դաշ- նակցութեան Կ. Պոլսոյ Կօմիտէ.

Յարգամեծար Տեարք.

«Ազգային պատիւս յանդիման արատաւորող և անձս զարհուրելի միջոցներով ոչնչացնելու ջանացող գաղտնի մարմնոյ մը դէմ բողոքելով՝ ազգային սահմանի մէջ դատաւարելու համար՝ տաան և չորս տարիէ ի վեր սպասելէ և ընդունայն աննկարագրելի տառապանքներ կրելէս յետոյ՝ տարուոյս յամարան Օսմ. կառավարու- թեան հրատարակած իւր սահմանադրական մակերեւեալ ազատութենէն փութապէս օգտուելով՝ ձայնս բարձրացուցի ուժգնապէս հետեւեալ եռադէմ բողոքագրովքս:

Յարգամեծար Տեարք, ինչպէս պիտի տեսնէք՝ երեք են բողոքագրերս, ըստ կարգին մատուցման. Ա. ն հրա- ժարեալ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի, Բ. ն այժմեան Կ. Պոլսոյ Պատրիարք Ամե- նապատիւ Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրեանի և Գ. ն Հնչական կուսակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մաս- նախմբին ուղղեալ:

Ահաւասիկ նոցա բառական ընդօրինակութիւնքն, յատկապէս Ձեզ տեղեկատուութեան համար: Յարգամե- ծար Տեարք, ահա տեսաք վերոգրեալ երեք գրութիւն- քըս, որք՝ յայտնապէս կը ցուցնեն և կը հաստատեն դա- տախաղութեանս և բողոքիս ծագումն, պատճառն, ու- րակըն և պարագաները և անոնց ցաւալի վախճանը էա- կան և գոյական մասամբ և եթ, առանց յարակից ման-

բաժանութեան: Ուստի, ինչպէս «Հնչական կուսակ- ցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին» Ձեզ եւս իբր «Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կօմիտէ» անուամբ ազգային կազմակերպեալ և նահապէս գաղտնի գործող մարմին՝ ուղղելով նոցա պարունակութիւնքն՝ առանց սակայն ցաւալի վիճակիս ենթարկուած «Հնչական կու- սակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին» կողմանէ տնօրինեալ լինելուն մասին՝ գոյացուցած համոզմանս հաւասար վերաբերում տրտայայտելու Ձեր մասին՝ իբր իսկ և իսկ կենաց և մահու էական խնդիր՝ պատուոյս պաշտպանութեան և գոյութեանս պահպանման նպատա- կաւ՝ ըստ իրաւանցս ազատ և համարձակաւար՝ ինչպէս կը յուսամ՝ թէ կր փափաղիք՝ կը հարցնեմ «Հ. Յ. Դաշ- նակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Կօմիտէիդ» թէ՛ Դուք էք զիս պատժողը և ըսս այնմ ամեն ինչ տնօրինողը. եթէ Դուք էք՝ յաւէտ կը բողոքեմ Ձեզ և անմիջապէս քննութիւն և արդար դատաստան կը պահանջեմ:

Յարգամեծար Տեարք, միանգամայն պատիւ ունիմ յայտնել Ձեզ թէ՛ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր ի վերոյ յայտնեալ պատասխանէն յետոյ՝ դիմմանս հե- տեւանօք՝ «Հնչական կուսակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին» եւս անմիջապէս գրաւոր և պաշտօնա- պէս հաճեցաւ պատասխանել ինձ թէ՛ «Ինքն առաջին անգամ է որ զիս կը ճանչնայ գրութենէս և թէ իւր կողմանէ իմ մասիս ու է որոշում և հետապնդում չ'ի- նելով՝ պարտիմ անձս ապահով և ազատ համարիլ.» կը մնայ արդ խնդրել Ձեր յարգամեծարութենէն՝ որ «Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Կօմիտէիդ» եւս հաճի ներկայ գրութեանս մասին իւր գրաւոր և պաշտօնական պատասխանն փութապէս ինձ տալու առ ի հանդարտու- թիւն և յապահովութիւն կարի յոյժ վտանգեալ անձիս:

Ի սէր ողջունելով և յաջողութիւն մաղթելով յար- գամեծար Տեարքդ Իւրեանց Ազգային բարենպատակ գործառնութեանց մասին՝ մնամ առ Ձեզ ի խորին յար- գանս:

Յակոբ Յ. Ալլահվերեան

Կ. Պոլիս, 1908 Նոյ. 23»

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Կոմիտէին կողմանէ ընկեր յարգամեծար Պ. Վահագն՝ ըստ հրահանգի յարգամեծար Պ. Ակնունւոյ՝ իւրեանց պաշտօնատեղւոյն մէջ՝ իրենց տուած դրոյս 1908 Դեկտ. 10ին պատասխանեց հետեւեալ կերպով և Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին նման արտօնեց միանգամայն տալ զայն՝ ի հրատ սրակութիւն, ահա՛ւասիկ:

«Պ. Յակոբ Ալլահվերտեան.

«Ձեր տուած նամակի իբր պատասխան՝ Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կոմիտէի կողմէ պաշտօնապէս կը յայտարարեմ թէ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը ձեզ հետ ուր է առնչութիւն չունի, և թէ՛ անցելոյն և թէ՛ ներկային մէջ ձեր մասին ուր է խնդիր և դատ չունենալով՝ ուր է հետապնդում չէ՛ ըրած. հետեւաբար Հ. Յ. Դաշնակցութեան կողմանէ ազատ և ապահով էք դուք:»

Արդ՝ Իզմիրեան Ամեն. Տ. Մաթթէոս Սրբ. Պատ. րիարք Հօր, Հնչակեան Կ. Պոլսոյ Պատ. Մասնախմբին և Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատ. Կոմիտէին ինձ ուղղած վերոգրեալ պաշտօնական պատասխաններն այսպէս հրատարակելէ յետոյ՝ (*) դա՛րձեալ կը պնդեմ թէ՛ հակառակ ինձ գործող և զիս ծածկաբար հալածող և հետապնդող ընդարձակակազմ այլ գաղտնի մարմին մը կայ, մի՛շտ գաղտնաբար և միոյ մէջ գործելու սկզբամբ շարժող, որոյ անունն և նպատակն լուսոյ այս երեւեալ առատութեան մէջ ինձ անծանօթ մնացած ինքեւրով թէ՛ անոր և թէ՛ ամենեցուն կը յայտարարեմ

(*) Հրաժարեալ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի ինձ տուած պատասխանին ամփոփումն է հետեւեալը «Ձեր խնդրագրէն կը հետեւեցնեմ թէ՛ դուք Աստուածատէր և միանգամայն աղգասէր մէկն էք. և երբ որոշ ամբաստանող մը չէք ցուցներ ձեր մասին՝ կերեւի առաւել թէ՛ դուք զժբաղդութեան միւնթարկուած էք. ուստի ձեզ օգնութիւն մ'ընենք աւելի լաւ կըլլայ» և կրկնակի պնդելով այս մասին՝ գիրս յանձնարարեց Փոխանորդ Արժ. Հօր. որոյ առաջաբոված նիւթական օգնութիւնն մերժելս յիշատակած եմ ի տեղին. ըստի Ն. Սրբազնութեան այս յայտնեալ պատասխանն առաւել գթասրտութեան և խղճահարութեան հանգամանք ունենալուն պատճառաւ չ'հրատարակեցի:

թէ՛ բաց ի սոցոռնց եթէ կայ և այլ մարմին մը գաղտնի՝ կամ հայ անհատ մը ի տիեզերս՝ որ ունին այ ինձ դէմ ԱԶԳՈՒԹԵԱՆ վերաբերեալ դատ մը կամ ամբաստանութիւն մը և կամ կարող լինի վկայելու թէ՛ ես հայ անհատի մը, հող չէ ստուերին թող ըլլայ վնաս հասուցած եմ՝ թող բարեհաճի փութալ գալ ի դատաստան, և ո՛ւր, ո՛ր պաշտօնական հայ ատենին կամ մարմնոյն ընդ առաջ որ ուզէ՝ պատրաստ եմ դատուելու և սիրով կրելու դատակնիքս:

Ապաքէն, ըստ որում ծանրապէս հիւանդ եմ և այդ պատճառաւ շատ անգամ լրագիր ընթեռնէ ցաւ ի տիրտ կը զրկուիմ՝ վասն որոյ կը խնդրեմ յամենեցուն՝ որ դատավարութեան վերաբերեալ ամեն գրութիւն, լրագիր կամ նամակ և այլ ինչ ուղղակի ներքոյ գրեալ հասցէին ինձ ուղղել հաճին և ձեռնարկեն գործողութեան միջեւ մէկ ամիս, այսինքն մինչեւ 1909 Յունուարի վերջ. զի յետ այնու ազատ համարելով զիս՝ եթէ ողջ մնամ՝ պիտի սկսիմ ազգապատկան յոյժ կարեւոր անակնունդեկաց յայտնութեան և միանգամայն հաստատելու թէ՛ ո՛վ է ճշմարիտ հայը, ի նպատակ Հայ ազգիս օգտակարը և ի փոխաբէն ինձ ցուցուած վերաբերումը և ըստ իրաւանցս ալ կարեւորագոյն ըսելիքներու ըստ կարի ամբողջութեան:

Զի՛րդ սակայն ի լուռ անցնիլ նաեւ ներկոյ դատախազական ձեռնարկութեանս կիրարկմանց նկատմամբ առանց սակաւ ինչ ըսելու, որ կարեւոր և միանգամայն իբր տեղատուական հարկ և պարագայ է համարելի ապագայ գրութեանս մասին:

Ուրեմն, որպէս տեսան ընթերցողք՝ տասն և չորս տարի անդի՛մադրելի տառազանքներ կրելէս յետոյ՝ այժմ եւս սոյն դատախազական ձեռնարկութեանս ատեն ալ՝ մասնաւորապէս յամենայնէ գուրկ՝ այնպէս զի մէկ ձեռքով ըլլալուս համար՝ հացս միշտ ուրիշի կօրել տալու հարկին տակ՝ քանի մը տեսակ հիւանդութեամբ ծանրացեալ վիճակիս մէջ՝ առանց ապրուստի ուր է միջոց ունենալու՝ չորս ամիս շարունակ ցաւոց մէջ գրելով, տեղէ տեղ երթալ գալով, անպաշտպան և անօգնական ի լրումն ամենեցուն փոխառութեամբ տպալորտիւն ծախքըն ալ հոգալով՝ ի գոհութիւն Աստուծոյ այսչափն

ի գլուխ հանեցի. որ թէպէտ ոչ կորուսած միւս թեւս Պալլադիոյ գերեզմանատնէն հանելով բերաւ նիւթապէս իւր տեղն հաստատեց, ոչ դրամներս ինձ դարձնելով զիս նախորդ սեղանաւորութեանս մէջ վերահաստատեց, ոչ այժմեան չքաւորութեանս մէջ գէթ օրական ապրուստս ապահովելու միջոց մը հնարեց և ոչ ալ յետ այսու թշուառաբար և անստգարար մեռնելէ փրկուելու յոյս ներշնչեց՝ այլ սակայն առատաբար պարգեւեց ինձ կենդանութիւն մը հոգեկան, չափովն այնքան՝ ցորճան կարէ տանիլ իմոյս նման աւերեալ ժարմին մը, ինձ նըման շարժուն մեռեալ մը, որ ցորչափ կը շարժիմ ի մեռելութեան իսկ՝ կզգամ և կը ճա՛աչեմ թէ՝ ՊԱՏՐԻ ըսուածը ոչ այլ ինչ է եթէ ոչ ԿԵԱՆՔ. ուստի այս համոզմամբ և առ այս գոյական հաւատովս ամեն ինչ առաթուր կոխելով շարժեցայ. կը յուսամ ապաքէն թէ՝ ՊԱՏՐԻ բառին գործնական նշանակութիւնը իրական ԿԵԱՆՔ հաւատացող և զգայութիւն, խիղճ և պատիւ ունեցող ամեն ճշմարիտ ՄԱՐԴ՝ արդար և իրաւացի պիտի գտնէ սոյն պատուապաշտպանութիւնս (*):

Իսկ արդ՝ կը մտածեմ այժմ թէ՝ մարմնական վիճակըս՝ որ թեթեւ քամիէ մը փչելու վտանգի տակ է յարածամ՝ պիտի կարէ՝ տոկալ արդեօք յառաջիկայ պատրաստելիք ընդարձակ ձեռնարկութեանս, որ ակնհայտ է թէ՝ ի չգոյութենէ հանգստութեան, դիւրագոյն միջոցներու և այլ տեսակ ձեռնտուութեան՝ կարի ծանրագոյն պիտի լինի ինձ ի կատար հանել զայն, այլ սակայն գոյով ապաւինեալ միշտ առ Աստուած՝ փոյթ ի փոյթ կընթանամ առ ինքն և մարմնոյս վրայ մնացած մէկ ձեռքս յուժգինս զարնելով՝ Նորա աթոռոյ պատուանդանին՝ կը դռչեմ սրտագին «ի Բեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան»:

Նախորդ սեղանաւոր այժմ ընկեցեալ միաթե

ՅԱԿՈԲ Յ. ԱԼԼԱՀՎԵՐՏԵԱՆ

Կ. Պոլիս. Գում-գարուի

Մուսալլա պողոտայ, թիւ 22:

(*) Սա յայտնեալ վիճակիս մէջ, աշխատութեամբ կերած հացս ըստ առաջնոյն ցարդ ձեռքէս յափշտակող և չապկէս զիս մերկացնողներուն դէմ եթէ բողոքեմ՝ այսուհետեւ դարձեալ ազգավնաս մէկը պիտի նկատուիմ և ապառնալեաց ենթարկուիմ ...:

454

1764

2013

